



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԵՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԵՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՍՈՐԻ
ԳԵՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԵՍՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ (ԱՆԿԱՄՈՒ)



ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍՏՐԱՆ



«ՉԱՆԳՆՉՈՒԹՅՈՒՆ»
ԳՆԱԶԱՐՄԱՆ ԵՎ ԳԵՏՆԱԿԱՆ
ԿՈՄՔԵՆԱՏ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



**SCIENTIFIC
ARTSAKH**

**НАУЧНЫЙ
АРЦАХ**

№ 2(3), 2019

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(3), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Նվիրվում է Երևանի պետական համալսարանի
հիմնադրման 100-ամյակին**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՄԻՍՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԱՆԿՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
Ռուզաննա ՀԱՎՈՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 2(3), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 472 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 2-րդ համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Հարավային Օսեթիան, Ռուսաստանի Դաշնությունը և Ուկրաինան ներկայացնող մոտ հինգ տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

*Dedicated to the 100th Anniversary
of Yerevan State University*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 2(3), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 472 pages.

The second issue of «Scientific Artsakh» journal 2019 comprises the scientific works of approximately 50 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Islamic Republic of Iran, Poland, South Ossetia, Russia and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert

Издаётся решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Посвящается 100-летию основания
Ереванского государственного университета*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джультетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 2(3), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 472 страниц.

В втором номере 2019 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Исламской Республики Иран, Польши, Южной Осетии, России и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее Армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՂՄԵՐԸ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի իրավական հարցերով փորձագետ,
փաստաբան, հետապոտող, ԱԵԳՄՄ անդամ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
artashes.khalatyan@mail.ru

Սույն հետապոտության նպատակն է ուսումնասիրել Արցախյան հակամարտության բանակցային գործընթացը Հայաստանում Թավշյա հեղափոխությունից հետո և վեր հանել նոր կառավարության մոտեցումները հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ՝ ելակետ ընդունելով 2019թ.-ի մարտի 12-ին Հայաստանի և Արցախի անվտանգության խորհուրդների համատեղ նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանի ծրագրային ելույթը:

Այդ ելույթի հիմնական թեզերն էին բանակցային եռակողմ ձևաչափի վերականգնման անհրաժեշտությունն ու Մադրիդյան սկզբունքներից հրաժարվելու հրամայականը: Հետապոտությամբ փորձ է արվել տալ Արցախյան հակամարտությունում Հայաստանի կառավարության նոր տեսլականի հիմնավորումը՝ հիմք ընդունելով ներպետական ու միջազգային իրավական փաստաթղթերը՝ ՀՀ Սահմանադրությունը, ԵԱՀԽ-ի 1994թ. բուդապեշտյան զագաթածողովի ելույթի փաստաթուղթը, 1994թ. Բիշքեքի արձանագրությունը և այլն: Ի լրումն նշյալի՝ հետապոտությունը լուծել է նաև Հայաստանի վարչապետի ծրագրային ելույթի ծիրի ներքո Արցախյան հակամարտության կարգավորման հայանպաստ տարբերակի առաջադրման խնդիրը՝ հիմք ընդունելով ինչպես պատմաքաղաքական, այնպես էլ միջազգային-իրավական փաստարկները՝ 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ(ք)Կ կովկասյան բյուրոյի անհրավաչափ որոշումն Արցախն Ադրբեջանին փոխանցելու վերաբերյալ, 1988-1991թթ. Ադրբեջանից Արցախի անջատման գործընթացի իրավաչափությունը ԽՍՀՄ օրենսդրության համատեքստում, այսպես կոչված «անջատում որպես փոխհատուցում» միջազգայնորեն լեգիտիմ հայեցակարգը, որով բռնաճնշումների ենթարկվող ազգային փոքրամասնությունները կարող են հիմնավորել մայր պետությունից անջատվելու իրավաչափությունը և այլն:

Հետապոտությունը մշակելիս օգտագործվել են պատմաիրավական, համեմատական, դիալեկտիկական գիտական մեթոդները:

Հեղինակի հիմնական ելույթներն են Արցախյան հակամարտության կարգավորման նոր հայեցակարգի ձևավորման օրինաչափությունը, «տարածքներ խաղաղության կամ Արցախի միջանկյալ կարգավիճակի դիմաց» բանաձևի անթույլատրելիությունը, փոխպիջումների հնարավորությունը միայն Արցախի անկախությունն Ադրբեջանի կողմից ճանաչվելու դեպքում և այն էլ փոխպիջումների շուրջ բանակցությունների իրականացումն Ադրբեջանի ու Արցախի միջև՝ միմյանց սահմանները դեղինիտացման և դեմարկացման ձևով, Հայաստանի և Արցախի հետագա քաղաքական ու տնտեսական վարգացման անհրաժեշտությունը բանակցային խաղաղ գործընթացի անշրջելիության ապահովման նպատակով:

* Հոդվածը ներկայացվել է 07.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Հիմնաբաներ՝ Արցախյան հակամարտություն, Մարդիոյան սկզբունքներ, «անջատում որպես փոխհատուցում» սկզբունք, ազգերի ինքնորոշման իրավունք, եռակողմ բանակցային ձևաչափ, Թավշյա հեղափոխություն, ԵԱՀԿ Մինսկի խումբ, հանրաքվե:

2018թ. տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունը համընկել է տարածաշրջանային և ընդհուպ համաշխարհային մակարդակում գեոպոլիտիկ դինամիկ գործընթացների հետ, որոնք անհրաժեշտաբար իրենց ազդեցությունն են գործում միջազգային իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքների նորմատիվ բովանդակության և կիրառման պրակտիկայի վրա, ինչպիսիք են՝ ազգերի ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականությունը: Գնալով ավելի երևացող է դառնում, որ Երկրորդ աշխարհահամարտից հետո ձևավորված աշխարհակարգը գտնվում է ակտիվ վերանայման փուլում, փոփոխվում կամ վերախմաստավորվում են նախկին հայեցակարգերը և մոտեցումները, ինչը միջազգային համակարգի բոլոր սուբյեկտներից, այդ թվում Հայաստանից պահանջում է ներդնել քաղաքական, իրավական, մտավոր և այլ ռեսուրսներ՝ իրենց քաղաքականությունը նոր իրողություններին ներդաշնակեցնելու ուղղությամբ:

Բանակցային ձևաչափի և բանակցությունների բովանդակային վերանայման վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի կոնցեպտը.

2019թ. մարտի 12-ին Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության խորհուրդների համատեղ նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանն ունեցավ ծրագրային ելույթ, որը կարելի է համարել Արցախյան հակամարտության կարգավորման նոր հայեցակարգի մշակման սկիզբ:

Իր ելույթում վարչապետը մասնավորապես, ասել է. «... 2018թ.-ի դեկտեմբերի 9-ին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո սա իմ առաջին այցն է Արցախի Հանրապետություն, և ուզում եմ ընդգծել, որ խորհրդարանական ընտրություններում «Իմ քայլը» դաշինքը Հայաստանի ժողովրդից ուժեղ մանդատ է ստացել՝ Արցախի Հանրապետության սուբյեկտության մակարդակը բարձրացնելու և արցախյան հիմնահարցի կարգավորման բանակցային գործընթացում Արցախի՝ որպես հակամարտության հիմնական կողմի ներգրավվածությանն ուղղված քայլեր անելու համար: (...) Հարկ եմ համարում ընդգծել, որ Արցախի ներգրավվածությունը բանակցային գործընթացում մեզ համար քմահաճույք չէ, ոչ էլ առավել ևս նախապայման, այլ պարզ արձանագրումն այն բանի, որ Լեռնային Ղարաբաղի կարգավորման հարցում առանցքային նշանակություն ունի Արցախի ներգրավվածությունը: Բանակցությունների մինչև այժմ հայտնի շրջանակը, ըստ էության, ներառում են շահագրգիռ բոլոր կողմերին, բացի մեկից: Այդ բանակցություններում ներկայացված է Ադրբեջանը՝ ի դեմս նախագահ Ալիևի: Վերջինս, ի դեպ, ներկայացնում է նաև, ինչպես ինքն է ասում, Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքը, որովհետև այդ համայնքի ներկայացուցիչները, հանդիսանալով Ադրբեջանի քաղաքացի, մասնակցել են Ադրբեջանի նախագահական ընտրություններին և, հետևաբար, Ադրբեջանի նախագահին տվել են նաև իրենց ներկայացնելու լիազորություն, հետևաբար բանակցային սեղանի շուրջ Ադրբեջանի նախագահի ներկայությունն ապահովում է նաև ժամանակին Ղարաբաղում ապրած ադրբեջանցիների ներկայությունը:

Այդ բանակցություններում ներկայացված է նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս երկրի վարչապետի, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչ: Հետևաբար, Հայաստանի ժողովուրդը նույնպես ներկայացված է բանակցային գործընթացում:

Ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության՝ բանակցային գործընթացում ներկայացված է նաև միջազգային հանրությունը: (...) Բայց գլխավոր

հարցը հետևյալն է՝ իսկ բանակցային գործընթացում ո՞վ է ներկայացնում Արցախի ժողովրդին կամ, ինչպես որոշ դեպքերում ասվում է, Ղարաբաղի հայությանը: Խնդիրն այն է, որ բանակցային գործընթացում այսօր Արցախի ժողովրդին ներկայացնելու լիազորություն, լեգիտիմություն ունեցող որևէ ներկայացուցիչ չկա, որովհետև բանակցային սեղանի շուրջ ներկա չէ Արցախի ժողովրդի կամ, ինչպես մեր որոշ գործընկերներ գերադասում են ասել, Ղարաբաղի հայության քվեն, լիազորությունն ստացած որևէ սուբյեկտ:

Բազմիցս ասել եմ, որ Հայաստանի վարչապետը չի կարող նման լիազորություն կատարել՝ այն պարզ պատճառով, որ Արցախի ժողովուրդը Հայաստանի ընտրություններին չի մասնակցում, չի քվեարկում և, ուրեմն Հայաստանի վարչապետը չի մտնում Արցախի ժողովրդին ներկայացնելու լիազորություն ունեցող անձանց շրջանակի մեջ: Եվ սա ոչ թե քմահաճույքի, նախապայմանի, այլ սովորական լեգիտիմության հարց է, իսկ լեգիտիմությունը ժամանակակից հարաբերությունների առանցքային գործոն է՝ ոչ միայն ներքաղաքական, այլև միջպետական և միջազգային հարաբերություններում:

Ի դեպ, անհեթեթ են բոլոր այն մեկնաբանությունները, թե Հայաստանի Հանրապետությունը կամ վարչապետը այս դիրքորոշմամբ իրենց ուսերից թոթափում են պատասխանատվությունը և այն դնում են Արցախի իշխանության կամ ժողովրդի վրա: Որևէ շահարկման տեղ չթողնելու համար հարկ եմ համարում ընդգծել՝ Հայաստանի Հանրապետությունը եղել է, կա և կմնա Արցախի անվտանգության թիվ մեկ երաշխավորը և կշարունակի իր ներգրավվածությունը խաղաղության գործընթացում:

Հաջորդ կարևորագույն հարցը, որին անհրաժեշտ է պատասխանել, հետևյալն է՝ իսկ Հայաստանի կառավարություն ընդունո՞ւմ է արդյոք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից առաջ քաշվող 3 սկզբունքները և 6 տարրերը՝ որպես բանակցային գործընթացի հիմք: Սա իսկապես կարևորագույն հարց է, բայց այս հարցին ի պատասխան մենք կարիք ունենք կարևոր պարզաբանումների: Իսկ ի՞նչ կարող են նշանակել այդ սկզբունքները գործնականում, և ո՞ւմն է դրանք մեկնաբանելու իրավունքը: Սա կարևոր է, որովհետև այն, ինչպես այդ սկզբունքները մեկնաբանում է Ադրբեյջանը, մեզ համար անընդունելի է: Մենք, իհարկե, կարող ենք հանդես գալ այդ սկզբունքների սեփական մեկնաբանությամբ, բայց դա անիմաստ է, որովհետև մեր նպատակը ոչ թե լեզվակռիվն է, այլ արդյունավետ բանակցային գործընթացը: Եվ հետևաբար, բանակցային գործընթացի հիմք պետք է դառնան տարրերից մեկերի տեղիք չտվող արձանագրումները: Բայց համանախագահների կողմից առաջարկված սկզբունքները, տարրերը, ինչպես արդեն նշեցի, վերջին 10 տարիներին ամենատարբեր և ամենատարածական մեկնաբանությունների տեղիք են տվել, և հետևաբար, առաջիկա բանակցային գործընթացի կարևորագույն նպատակը պետք է լինի այսպես ասած հիմնական հասկացությունների՝ 3 սկզբունքների և 6 տարրերի պարզաբանումը, և մենք պատրաստ ենք նաև այսպիսի խոսակցության: (...):»:

Վարչապետի սույն ելույթն ունի կարևորագույն իրավաքաղաքական նշանակություն: Նախ՝ ՀՀ Սահմանադրության 146-րդ և 152-րդ հոդվածների ուժով վարչապետը պետության արտաքին քաղաքականությունը մշակող հիմնական պաշտոնյան է, ում ի պաշտոնե ասված խոսքն ունի ոչ միայն քաղաքական, այլև ընդգծված իրավական նշանակություն: Վարչապետի՝ պաշտոնեական կարգավիճակում հնչեցրած արտաքին-քաղաքական ցանկացած միտք, հայեցակարգ և այլ դրույթ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը: Հետևաբար, վարչապետի ելույթը, այն էլ որպես Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի ղեկավար պաշտոնատար անձ, որով

սահմանվում են Արցախյան հիմնախնդրի կարգավորման որոշակի սկզբունքներ, ունի սահմանադրաիրավական արժեք և ուժ:

Դառնալով վարչապետի Նշյալ ծրագրային ելույթի բուն բովանդակությանը՝ կարելի է առանձնացնել հետևյալ թեզերը.

1. Արցախյան հակամարտության երկսուբյեկտ բանակցային ձևաչափը լեգիտիմ չէ, քանի որ բանակցություններին չի մասնակցում հակամարտության կողմի մանդատ ունեցող Արցախի ներկայացուցիչը.

2. Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը բանակցությունների սեղանի մոտ չի կարող ներկայացնել Արցախը, քանի որ չի ընտրվել Արցախի ժողովրդի կողմից և, հետևաբար, չունի ժողովրդավարական մանդատ և լիազորություն հանդես գալ Արցախի ժողովրդի անունից.

3. Հայ-ադրբեջանական բանակցությունների առարկա հանդիսացող Մադրիդյան սկզբունքները ներկայիս բովանդակությամբ ունակ չեն կարգավորել հակամարտությունը և խաղաղություն բերել կողմերին:

Ըստ ելույթան, վարչապետ Փաշինյանը կարևորագույն քայլ է կատարում դեպի ԼԼՈՆ Տեր-Պետրոսյանի իշխանության տարիների բանակցային հայեցակարգի վերականգնում որոշակի սրբագրումներով: Անկախ ներքին քաղաքականությունում ունեցած ոչ միանշանակ դերակատարումանը՝ Արցախյան ճակատում առաջին նախագահ ԼԼՈՆ Տեր-Պետրոսյանը վարել է գաղափարապես ամենակայացած ու ռացիոնալ քաղաքականությունը: Նիկոլ Փաշինյանի, իսկ դրանից առաջ Սերժ Սարգսյանի կողմից իր իշխանության վերջին տարիներին վարված Արցախյան քաղաքականությունը փաստացի հիմք է ընդունել տերպետրոսյանական արտաքին-քաղաքական նվաճումները: Մասնավորապես, Արցախյան հարցում հայկական դիվանագիտության ամենապատկառելի ձեռքբերումներն էին 1994թ. մայիսի 8-9-ին Հայաստանի Հանրապետության, Արցախի և Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցիչների կողմից ստորագրված Բիշքեքյան արձանագրությունը հրադադարի հաստատման վերաբերյալ, 1995թ. փետրվարի 6-ին ստորագրված հրադադարի ռեժիմի ամրապնդման մասին եռակողմ համաձայնագիրը, 1994թ. դեկտեմբերի 5-6-ի ԵԱՀԽ-ի (ներկայիս ԵԱՀԿ-ի) Բուդապեշտի գազաթնաժողովի եզրափակիչ փաստաթուղթն ու դրա հիման վրա 1995թ. մարտի 31-ին ԵԱՀԿ Ավագ պաշտոնատար անձանց կողմից ընդունված փաստաթուղթը, որով Արցախը ճանաչվել է հակամարտության կողմ:

Հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների իրավաչափ ձևաչափի վերականգնումը խիստ կարևոր է հակամարտության արդար հանգուցալուծման համար, քանի որ բանակցությունների ձևաչափը կանխորոշում է բանակցային գործընթացի բովանդակային ու կառուցակարգային ուղենիշները և, ըստ այդմ, ուղղակիորեն ազդում է Արցախյան հակամարտության իրավական ու քաղաքական առանձնահատկությունների ճիշտ ընկալման և արձանագրման վրա:

Իր ինքնորոշման իրավունքի ճանաչման համար պայքարող Արցախի ժողովրդի պահանջների լեգիտիմության առաջնային նախապայմանը պահանջատիրոջ կարգավիճակի ամրագրումն է՝ հակամարտության ու բանակցությունների լիիրավ մասնակցի ձևով: Եթե Արցախը *de jure* չի մասնակցում բանակցություններին, դրանով իսկ միջազգայնորեն կասկածի տակ է առնվում հայկական երկրորդ պետության սուբյեկտությունը, ինչը համապատասխանաբար թուլացնում է Արցախի ինքնորոշման իրավունքի պահանջատիրության դիրքերը: Հետևաբար Արցախյան հիմնահարցի հայանապատ լուծման ուղղությամբ առաջնային քայլերից մեկն իրավամբ պետք է լինի բանակցությունների եռակողմ ձևաչափի վերականգնումը, և վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության քայլերն ի ցույց են դնում Հայաստանի Հանրապետության սույն հանձնառությունը: Ընդ որում, Նիկոլ Փաշինյանն այս հարցում որդեգրել է բավական ճկուն մոտեցում, որն արտացոլում է միջազգային

հարաբերություններում պետությունների իշխանությունների իրավահաջորդության փաստը, ինչպես նաև «կեղտոտ սպիտակեղենը» դուրս չի հանում: Մասնավորապես, Փաշինյանն Ադրբեջանին և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ներկայացնում է թերևս «երկայթյա» փաստարկ, որը հատկապես հոգեհարազատ պետք է լինի համանախագահող պետություններից ժողովրդավարական աշխարհը ներկայացնող ԱՄՆ-ին և Ֆրանսիային, այն է՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչները՝ նախագահը, վարչապետը կամ արտաքին գործերի նախարարը չեն ընտրվել կամ որևէ կերպ չեն նշանակվել Արցախի ժողովրդի կամահայտնության հիման վրա, հետևաբար չեն կարող ներկայացնել Արցախի ժողովրդին բանակցային գործընթացում: Այդպիսով մի կողմից՝ փորձ է արվում Արցախյան հակամարտության լուծման հնարավոր ուղիներն աղերսել ժողովրդավարության հայեցակարգի և ժողովրդավարական ընթացակարգերի հետ՝ հաշվի առնելով, որ նման մոտեցումը մեծ հավանականությամբ ընկալելի կլինի ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք միջնորդ պետություններից առնվազն երկուսի համար, իսկ մյուս կողմից՝ Հայաստանն ավելորդ չի ծանրանում Ռոբերտ Զոչարյանի իշխանավարման տարիներին թույլ տրված արտաքին քաղաքական սխալի վրա, քանզի բոլոր դեպքերում դա հայկական կողմերի և, նախևառաջ, Հայաստանի Հանրապետության որոշումն էր, և եթե մենք ունենք ինչ-որ մեկին մեղադրելու ցանկություն, ապա պետք է մեղադրենք միմիայն այն ժամանակվա իշխանությանը, իսկ միջազգային իրավունքի տեսանկյունից խոցելի են դառնում բացառապես հայկական զույգ պետությունները: Այսինքն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իրավիճակը ներկայացնում է ոչ թե որպես *status quo ante*-ն վերադարձնելու իրավաչափության հիմնավորում, այլ ցույց է տալիս, որ պարզապես չի կարող ներկայացնել Արցախը, քանի որ նման իրավասություն չունի, և Արցախի մասով իր որևէ պայմանավորվածություն լեգիտիմ չի կարող լինել: Հարկ է նշել, որ այսպես կոչված փաստացի պետությունների միջազգային ճանաչման հարցում ժողովրդավարությունը մեծ դեր է կատարում թե՛ այդ պետությունների ինստիտուտների կազմավորման և գործունեության և թե՛ չճանաչված պետությունների կարգավիճակի որոշման բանակցային գործընթացի ժողովրդավարական բնույթի իմաստով⁵¹¹: Տեղին է հիշատակել, որ Կոսովոյի գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի 2010թ. հուլիսի 22-ի խորհրդատվական եզրակացությամբ ընունվում է այն չճանաչված պետական միավորի անկախության իրավաչափությունը, որտեղ գործում են ժողովրդավարական ընթացակարգով ձևավորված ինստիտուտներ, որպիսի կանոնը նաև ունի միջազգային իրավական սովորույթի կարգավիճակ⁵¹²:

Նիկոլ Փաշինյանի վերոնշյալ ծրագրային ելույթի երրորդ հիմնական թեզը բանակցային սեղանին դրված կարգավորման ծրագրի՝ Մադրիդյան սկզբունքների հիմնադրույթների ելության բացահայտման անհրաժեշտությունն է: Վարչապետը փաստում է, որ Հայաստանն ու Ադրբեջանը տարակերպ են ընկալում կարգավորման սկզբունքները, իսկ առանց ընկալման չափանիշների համադրելիության՝ հնարավոր չէ հաջողության հասնել: Փաստացի Նիկոլ Փաշինյանը կասկածի տակ է առնում Մադրիդյան սկզբունքների կենսունակությունը, որոնք ոչ միայն հայանապատ չեն, այլև փաստացի հակոտնյա են Արցախյան հակամարտության բուն ելության հետ և չեն արտացոլում ազգերի ինքնորոշման սկզբունքի Նորմատիվ բնույթից բխող Արցախի ժողովրդի կենսական իրավունքը որոշելու քաղաքական ճակատագիրն ու պատկանելությունը: Պարզ է, որ վարչապետը դիվանագիտական լեզվաբանություն

⁵¹¹ Տե՛ս նաև **V. Kopeček, T. Hoch, V. Baar** De Facto States and Democracy: The case of Abkhazia, *Bulletin of Geography. Socio-economic Series / No. 32 (2016): 85–104.*

⁵¹² Տե՛ս 'u *Advisory Opinion on the Accordance with International Law of Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo*, 410,20, (I.C.J. 2010), **A. Cassese**, *Self-Determination of Peoples*. Cambridge: University Press, 1995, pp.112-118

կիրառելով՝ փորձ է անում միջազգային հանրությանը հղել հենց այս հաղորդագրությունը, քանի որ Մադրիդյան սկզբունքների բովանդակությունը բավականին որոշակի է և տարակարծության տեղիք չի տալիս՝ Արցախի հայտնի յոթ շրջանների վերադարձ Ադրբեջանին (անգամ ոչ թե չեզոք գոտու հայտարարում, այլ այդ շրջանների ուղղակի վերադարձ Ադրբեջանի իրավագրությանը), փախստականների վերադարձ Արցախ (խոսքը վերաբերում է նախևառաջ ադրբեջանցիներին) և Արցախին միջանկյալ կարգավիճակի տրամադրում՝ գործնականում անորոշ ժամանակ անց հանրաքվե անցկացնելու խոստման դիմաց, ինչպես նաև հակամարտության գոտում խաղաղապահ ուժերի տեղակայում⁵¹³: Ավելորդ չէ ընդգծել, որ հակամարտության կարգավորման նման սցենարի գոյությունը որոշ չափով պայմանավորված է նաև բանակցային աղճատված ձևաչափով, երբ Արցախի չմասնակցելը կարգավորման բանակցություններին առնվազն ստեղծել է բացասական ֆոն՝ ձևավորելով կարծիք, որ Արցախյան հակամարտությունը ոչ թե ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա սկսված կոնֆլիկտ է Արցախի ու Ադրբեջանի միջև, որի ամենաարդյունավետ հանգուցալուծումը կարող է համարվել Արցախի անջատման միջազգային ճանաչումը, այլ տարածքային վեճ է Ադրբեջանի ու Հայաստանի միջև, իսկ այդպիսի պայմաններում տարածքային ամբողջականության սկզբունքին կարող է տրվել գերակայություն: Պատահական չէ, որ վերջերս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Չախարովան մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպմանը փաստացի պատասխանել է Նիկոլ Փաշինյանի՝ բանակցությունների եռակողմ ձևաչափը վերականգնելու հայտարարություններին՝ նշելով, որ Արցախի կարգավիճակի հարցը պետք է որոշվի Հայաստանի ու Ադրբեջանի կողմից՝ բանակցությունների միջոցով⁵¹⁴: Ռուսաստանցի պաշտոնյայի շուրթերով հնչող՝ Ռուսաստանի պաշտոնական տեսակետն արտացոլում է հայկական կողմի՝ ավելի քան քսան տարվա վաղեմության դիվանագիտական մեծ սխալի հետևանքով բանակցային գործընթացում ձևավորված արատավոր իներցիան, երբ հակամարտության կարգավորման բանակցային ձևաչափի աղճատման հետևանքով ձևախեղվել է նաև Արցախյան կոնֆլիկտի ելույթի վերաբերյալ միջազգային հանրության առնվազն մի մասի պատկերացումը: Արդյունքում լուրջ վտանգներ են առաջանում Հայաստանի համար, որ նման պայմաններում ինքնորոշման իրավունքի իրացման համար պայքարող Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորից կարող է վերածվել հակամարտության միակ հայկական կողմի, որն իրականացնում է անեքսիոն քաղաքականություն, ինչը, բնականաբար, իրականությանը չի համապատասխանում և հակոտնյա է Արցախյան հակամարտության նախապատմությանն ու բովանդակությանը:

Թավշյա հեղափոխության հետևանքով Հայաստանի ժողովրդավարացման գործընթացների աշխուժացումը և, մասնավորապես, համազգային ընդգրկում ունեցող լեզիտիմ իշխանության ձևավորումը պարարտ հող են ստեղծել Արցախյան հակամարտության բանակցային լիարժեք ձևաչափի վերականգնման և հանուն միջազգային իրավունքի նորմերին հակասող կարգավորման փոխտոկայության փոփոխության՝ դիվանագիտական պայքար մղելու համար, ինչը գիտակցում է նաև

⁵¹³ Տե՛ս Մադրիդյան սկզբունքներ- ամբողջական տեքստ, Հայկական ուսումնասիրությունների «Անի» կենտրոն: <https://www.aniarc.am/2019/01/25/madrid-principals-armenian-text/>:

⁵¹⁴ Տե՛ս Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը պետք է որոշվի Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցությունների միջոցով. Մարիա Չախարովա, 09.08.2019թ., <https://www.tert.am/am/news/2019/08/09/Zakharova/3068154>:

Հայաստանի նոր կառավարությունը և վարչապետի, ինչպես նաև այլ պաշտոնատար անձանց ձեռամբ ձեռնամուխ է եղել նշված նպատակների իրականացմանը⁵¹⁵:

Արցախյան հակամարտության հայանպաստ կարգավորման հիմքերը:

Արցախյան հակամարտության կարգավորման օպտիմալ տարբերակի փնտրտուքը շարունակվում է շուրջ 30 տարի: Բանակցային սեղանին հերթով հայտնվել են ամենատարբեր առաջարկներ, որոնք, սակայն, ունեցել են միևնույն անփառունակ ճակատագիրը: Այսօր նման վիճակում են հայտնվել նաև այսպես կոչված Մադրիդյան սկզբունքները: Վերջիններս ոչ միայն չեն արտահայտում Արցախյան հակամարտության բուն էությունը և միջազգային-իրավական իմաստով խոցելի են, այլև Ադրբեջանի ռազմատեսչ քաղաքականության և հատկապես Քառօրյա պատերազմից հետո պարզապես սպառնալիք են Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգության համար: Սույն համատեքստում, թերևս, հարկ է անդրադառնալ Արցախյան հակամարտության միջազգային-իրավական ասպեկտներին, քանի որ դրանք իրավամբ պետք է հանդիսանան հայկական կողմի բանակցային ռազմավարության հիմքը:

Արցախյան հակամարտության իրավական հիմնասյունն ազգերի ինքնորոշման իրավունքն է: Ընդ որում, ինքնորոշման իրավունքը, ըստ մեզ, Արցախի պարագայում պետք է փաստարկվի երկու ուղղությամբ: Նախ՝ պետք է հատուկ ուշադրություն դարձվի նախընթաց պատմական իրողություններին, սակայն ոչ թե վերացական «պատմական ճշմարտության», այլ որոշակի վերաբերելի իրավաբանական փաստերի համատեքստում: Ստորև ներկայացնում ենք այդ փաստերը:

1. Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության Կովկասի բյուրոյի 1921թ.-ի հուլիսի 5-ի որոշումն Արցախն Ադրբեջանի իրավասությանը փոխանցելու վերաբերյալ առաջինն է, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանը, լինելով խորհրդայնացված, այդուհանդերձ իրավաբանորեն անկախ պետություն էր, և այլ պետության իշխող կուսակցության որևէ մարմին իրավասու չէր որոշում ընդունելու երրորդ պետությանը վերաբերող տարածքային խնդիրն այս կամ այն կերպ լուծելու վերաբերյալ: Իսկ հայտնի է, որ Արցախյան հակամարտության ձևավորման սկզբնապատճառը հենց Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության նշյալ ոչ իրավաչափ որոշումն էր:

2. Արցախի ժողովուրդը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո 1991թ. -ի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած հանրաքվեում գերակշիռ մեծամասնությամբ «կողմ» քվեարկեց անկախությանը, ընդ որում, Արցախի ժողովրդի կամահայտնության արտահայտումը համապատասխանում էր ԽՍՀՄ-ի օրենսդրությանը: Ի մասնավորի, ԽՍՀՄ-ից անջատվելու մասին օրենքի 3-րդ հոդվածը ԽՍՀՄ-ից անջատվելու հնարավորություն էր տալիս ոչ միայն միութենական հանրապետություններին, այլև վերջիններիս կազմում գտնվող ինքնավարություններին, որպիսին Արցախն էր՝ ունենալով Ադրբեջանի ինքնավար մարզի կարգավիճակ: Եթե ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող հանրապետությունները դուրս էին գալիս ԽՍՀՄ-ի կազմից, դրանց կազմի մեջ մտնող ինքնավարություններն իրավունք ունեին որոշելու՝ մնալու՞ են ԽՍՀՄ-ի, թե՞ Ադրբեջանի կազմում, ինչպես նաև ազատ էին որոշելու իրենց իրավական կարգավիճակն ընդհանրապես՝ ներառյալ անկախությունը թե՛ ԽՍՀՄ-ից և թե՛ ԽՍՀՄ-ից անջատվող հանրապետությունից:

3. Ադրբեջանը, 1991թ.-ի օգոստոսի 30-ին ընդունելով պետական անկախության մասին սահմանադրական ակտը, վերջինիս 4-րդ հոդվածով հռչակել է, որ հանդիսանում է Ադրբեջանի 1918-1920թթ.-ի Հանրապետության իրավահաջորդը,

⁵¹⁵ Տե՛ս Մենք ոչ մի թիզ հող հետ հանձնելու նպատակ չունենք. Վանեցյանը՝ Արցախում, <https://www.civilnet.am/news/2019/03/01/>:

սակայն հորհրդային Ադրբեջանի սահմաններով: Ադրբեջանը փաստացի հայտարարել է ինչպես Ադրբեջանի Առաջին, այնպես էլ Երկրորդ Հանրապետությունների իրավահաջորդության մասին, ինչը հակասում է միջազգային իրավունքի և պայմանագրային, և՛ սովորութային նորմերին: Այսպես՝ Պայմանագրերի վերաբերյալ պետությունների իրավահաջորդության մասին 1978թ.-ի Վիեննայի կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն՝ իրավահաջորդությունը չի ազդում գործող սահմանների և պայմանագրով նախատեսված սահմանային ռեժիմի վրա: Այսինքն՝ նորաստեղծ պետությունը, որն անջատվել է «մայր» պետությունից, պարտավոր է ճանաչել իրավանախորդ պետության սահմանները և սահմանային ռեժիմը: Հետևաբար, եթե Ադրբեջանն իրեն ճանաչում է Ադրբեջանի Առաջին Հանրապետության իրավահաջորդ, ուրեմն պարտավոր է ճանաչել այդ պետության սահմանները, որոնք երբևէ չեն ներառել Արցախը: Չնայած Ադրբեջանը չի հանդիսանում նշված կոնվենցիայի կողմ, սակայն մեջբերված կանոնը կազմում է նաև միջազգային սովորութային իրավունքի նորմ, ուստի ունի համապարտադիր նշանակություն պետությունների միջազգային համայնքի բոլոր անդամների համար:

Ազգերի ինքնորոշման իրավունքի փաստարկման երկրորդ ուղղությունը հայկական կողմի համար պետք է լինի այսպես կոչված «անջատում որպես փոխհատուցում» հայեցակարգը, որն առավել հայտնի է «remedial secession» անգլալեզու անվանմամբ: Վերջինիս էությունն այն է, որ եթե որևէ պետության կազմում կոմպակտ բնակվող ազգային փոքրամասնությունը ենթարկվում է հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը, սեփական լեզուն, սովորույթները, ավանդույթները պահպանելու, «մայր» պետության կառավարմանը մասնակցելու, սեփականության իրավունքները և այլն, որոնք այս կամ այն կերպ կազմակերպված են «մայր» պետության կողմից և կրում են համակարգված բնույթ, իրավագրվող ազգային հանրույթը կարող է իրացնել իր ինքնորոշման իրավունքը՝ ինքնավարության կամ ընդհուպ անջատման ձևով: Միջազգային իրավունքի մի շարք հեղինակավոր մասնագետներ գտնում են, որ «անջատում որպես փոխհատուցում» ինստիտուտն ունի սովորութային իրավական նորմի կարգավիճակ⁵¹⁶: Միջազգային իրավունքի մասնագետ, ներկայումս Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի կարծիքով այսօր ձևավորվում է միտում տարանջատելու «անջատում որպես փոխհատուցում» կամ «արդյունավետ անջատում» կոնցեպտը՝ որպես ազգային փոքրամասնության նկատմամբ մարդու իրավունքների կոպիտ խախտումների հետևանքով «մայր» պետությունից անջատման հիմք ինքնորոշման իրավունքի հիմքով անջատման դեպքերից⁵¹⁷:

Հատկանշական է, որ արտաքին ինքնորոշման այս նոր ձևավորվող կոնցեպտի իրավաչափության և Արցախի նկատմամբ դրա կիրառելիության իրատեսականության մասին խոսել է նաև Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ նշելով հետևյալը. «Կարգավորման գործընթացում հաջողության հասնելու համար, բացի Մարդրիդյան սկզբունքներում ամրագրված ինքնորոշման հանրաքվեի գաղափարի հետապնդումից, հայկական դիվանագիտությունը պարտավոր է օգտագործել նաև Ղարաբաղի անկախության անհրաժեշտության հիմնավորման չափազանց կարևոր մի այլ կռվան: Խոսքը վերաբերում է միջազգային իրավունքի բնագավառում վերջին տասնամյակների ընթացքում ակտիվորեն մշակվող, այսպես կոչված, «անջատում հանուն փրկության» (remedial secession) դոկտրինին, որի էությունը հետևյալն է: Երբ

⁵¹⁶ Տե՛ս Cassese A., նշվ. աշխ., նույն տեղում:

⁵¹⁷ Տե՛ս Khalatyan A. Nagorno-Karabakh Conflict in light of the ICJ's advisory Opinion on Kosovo: Whether the Nagorno-Karabakh Case Meets the Criteria Elaborated by the UN Court, 2011, https://law.aua.am/files/2012/02/Artashes_Khalatyan.pdf, p. 21:

որել է պետություն, իշխանությունների մակարդակով ռասայական, ազգային, կրոնական եւ այլատյացության հողի վրա սիստեմատիկաբար ոտնահարում է իր կազմում գտնվող էթնո-տերիտորիալ փոքրամասնության քաղաքացիական իրավունքները, դիմում բռնությունների, սպառնում բնաջնջմամբ կամ տեղահանությամբ, ապա միջազգային հանրությունը, այլեւ անհնարին համարելով տվյալ ժողովուրդների համակեցությունը, պարտավոր է հարկադրաբար, հանուն փոքրամասնության գոյության պահպանման, անջատել նրա զբաղեցրած տարածքը տվյալ պետությունից: (...):

Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում «անջատում հանուն փրկության» դոկտրինի կիրառման կարելիությունն այնքան մեծ է, որ հայկական կողմի դիվանագիտությունն իրավունք չունի այն անտեսել:»⁵¹⁸:

Ըստ եւթյան, ազգերի ինքնորոշման իրավունքը փաստացի հանգում է ազգային փոքրամասնության իրավունքին մասնակցելու «մայր» պետության քաղաքական որոշումների կայացմանը, պահպանել իր կոլեկտիվ ինքնությունը և անհատապես իր անդամների համար իրացնել տվյալ պետության Սահմանադրությամբ նախատեսված բոլոր իրավունքները, որոնք գործում են այդ երկրի քաղաքացիների համար: Եթե «մայր» պետությունը շարունակաբար և համակարգված խախտում է ազգային հանրային այդ իրավունքները՝ վերացնելով տեղական ինքնակառավարման ինստիտուտները կամ ձևախեղելով դրանց կազմավորման կարգը (տեղական ընտրություններում կենտրոնական իշխանությանը հավատարիմ անձանց «հաղթանակի» ապահովում, տեղական էլիտայի ազդեցիկ ներկայացուցիչների և քաղաքական գործիչների կաշառում, ահաբեկում և այլն), կազմակերպելով էթնիկ զտումներ կամ ազգային, լեզվական կամ կրոնական հիմքով հետապնդումներ, փակելով ազգային ուսումնական հաստատությունները և կատարելով նմանատիպ այլ գործողություններ, որոնք ձեռք են բերում պետական քաղաքականության բնույթ, նման ազգային հանրային կոմպակտ բնակեցված տարածքի մասը «մայր» պետության ինքնիշխանության ներքո վերածվում է հումանիտար լրջագույն խնդրի, երբ խոսք է գնում հազարավոր կամ միլիոնավոր մարդկանց կյանքի և բնականոն կենսագործունեության վտանգվածության մասին: Այդպիսի դեպքերում արտաքին ինքնորոշումը կամ անջատումը դիտվում է որպես «սանկցիա» իրավախախտ «մետրոպոլիայի» նկատմամբ, իսկ տուժած ազգային փոքրամասնությունն այդպիսով ստանում է «փոխհատուցում»՝ անկախության կամ այլ պետությանը (որպես կանոն ազգային կազմով նույնական) միանալու ձևով⁵¹⁹:

Սույն համատեքստում հարկ է նշել, որ ժամանակակից աշխարհում խիստ կարևոր է հաշվի առնել նաև «մայր» պետության և անջատման համար պայքարող կոմպակտ ազգային փոքրամասնության քաղաքակրթական ու մշակութային արժեքների հարաբերակցությունը: Ներկայում գործող միջազգային իրավակարգում, որը հիմնված է լիբերալ ժողովրդավարական նորմերի ու արժեքների վրա, պետության լեգիտիմության առաջնային տարրն անձնական ու կոլեկտիվ իրավունքների հարգումն ու պաշտպանությունն է՝ թե՛ ներպետական մակարդակում և թե՛ միջազգային հարաբերություններում: Ազգային փոքրամասնությունների իրավունքների նկատմամբ հարգանքը և դրանց պաշտպանությունը կազմում են ժամանակակից լեգիտիմ պետության առաջնային բաղադրիչներից մեկը: Եթե պետությունը որպես ազգային քաղաքականություն խախտում է էթնիկ, լեզվական կամ կրոնական փոքրամասնության իրավունքները՝ կոլեկտիվ ու անհատական մակարդակներում, այդ պետությունն այսպես թե այնպես խոտանում է իր միջազգային լեգիտիմությունը, ինչի հետևանքով իր

⁵¹⁸ Տե՛ս **Տեր - Պետրոսյան Լ.**, Մադրիդյան սկզբունքներով ամրագրված է Արցախի ժողովրդի՝ անկախ պետություն ստեղծելու իրավունքը, Հայկական ուսումնասիրությունների «Անի» կենտրոն, 2016, <https://www.aniarc.am/2016/05/08/levon-ter-petrosyan-nk-recognize-or-not-article-may-6/>:

⁵¹⁹ Տե՛ս նաև **Samuelian, T.**, J. Legal Aspects Of Artsakh's Self-Determination In The Context Of Contemporary International Legal Challenges: Before And After. Kosovo. Yerevan: 2010:

տարածքի անձեռնմխելիության պահանջը դառնում է խոցելի: Հետևաբար, Կատալոնիայի՝ Իսպանիայից անջատվելու պահանջը չի արժանանում միջազգային առաջադեմ հանրության բավարար աջակցությանը, իսկ Կոսովոյի, Արևելյան Թիմորի և Հարավային Սուդանի դեպքում ակնհայտ է քաղաքակիրթ աշխարհի համակրանքն ազգային, լեզվական ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, որոնք ենթարկվել են հետապնդումների, էթնիկ զտումների և իրենց հիմնարար իրավունքների այլ զանգվածային խախտումների⁵²⁰: Նշված դեպքերում ազգային փոքրամասնությունները հանրաքվեի միջոցով հաջողությամբ անջատվել են «մայր» պետություններից և հիմնադրել են իրենց անկախ պետականությունը, որն ընդհանուր առմամբ ճանաչվել է միջազգային հանրության կողմից կամ գտնվում է ճանաչման փուլում:

Հարկ է նշել, որ միջազգային իրավական ակտերով բավականին հստակորեն նախատեսված է ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման քննակվող դրսևորումը: Մասնավորապես Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների 1966թ. միջազգային դաշնագրի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի շնորհիվ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն իրականացնում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը: Իսկ 1970թ.-ի Միջազգային իրավունքի սկզբունքների և ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան՝ պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին հռչակագրով ՄԱԿ-ի անդամ-պետությունները պարտավորվում են զերծ մնալ ժողովուրդների ինքնորոշման, ազատության ու անկախության իրավունքների իրացումը բացառող ցանկացած ուժային գործողությունից: Ընդ որում, նշված հռչակագրով պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը չի ճանաչվում որպես գերակայություն ինքնորոշման իրավունքի նկատմամբ, քանի որ պետությունների տարածքային ամբողջականությունը պաշտպանության տակ է առնվում պայմանով, որ պետությունները կպահպանեն հռչակագրի դրույթները, որոնցից մեկը հենց վերոնշյալ կանոնն է պետությունների կողմից ազգերի ինքնորոշման իրավունքի պահպանության պարտականության մասին: Վերջինիս խախտման դեպքում իրավախախտ պետությունից ազգային փոքրամասնության անջատումը կարող է դիտվել իրավաչափ⁵²¹: Սույն հռչակագիրը կարևոր է այնքանով, որ ուղղակիորեն հենվում է ՄԱԿ-ի կանոնադրության վրա և, ըստ էության, զարգացնում է ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքները՝ այդպիսով մեծապես ազդելով պետությունների շարունակական վարքագծի մոդելավորման վրա: Կարելի է անգամ եզրակացնել, որ ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված ազգերի ինքնորոշման սկզբունքը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նաև սույն հռչակագրի դրույթները:

Ազգային հանրույթի անկախության վերոնշյալ հիմքն ունի ոչ միայն տեսական հիմնավորում, այլև արդեն իսկ կիրառվել է պրակտիկայում: Խոսքը վերաբերում է Հարավսլավիայից Կոսովոյի անջատման գործընթացին, ինչպես նաև Արևելյան Թիմորի և Հարավային Սուդանի անկախությանը, համապատասխանաբար Ինդոնեզիայից ու Սուդանից: Մասնավորապես Կոսովոյի հակամարտության կարգավորման 6 միջնորդ պետությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռուսաստանի կողմից 31.01.2006թ.-ին Լոնդոնում ստորագրված հռչակագրից հետևում է, որ նշված պետությունները ներառող այսպես կոչված Կոնտակտային խումբը ճանաչում է մարդու իրավունքների ոտնահարումը, ինչպես, օրինակ, էթնիկ զտումները

⁵²⁰ Երկայում Կոսովոն ճանաչվել է 111, Արևելյան Թիմորը՝ 31, Հարավային Սուդանը՝ 132 պետության կողմից:

⁵²¹ Տե՛ս նաև **Pechalova T.** Remedial secession as a right of self-determination: The cases of Kosovo and Abkhazia, Tilburg University, 2017, p. 31

Կոսովոյում որպէս այբանաբնակ երկրամասի վերջնական կարգավիճակը որոշելու հարցում Էական գործոն⁵²²: Արտաքին ինքնորոշումը և, մասնավորապէս, «արոյունավետ անջատումը» որոշակի չափանիշների բավարարելու պարագայում չի ժխտում Նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանը Կոսովոյի անկախության հռչակման իրավաչափության վերաբերյալ իր խորհրդատվական եզրակացության մեջ՝ մասնավորապէս ընդգծելով, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է պետությունների միջև հարաբերություններին⁵²³: Ստացվում է, որ ՄԱԿ-ի դատարանը տարածքային ամբողջականության սկզբունքը դիտարկում է միայն որպէս միջպետական հարաբերություններում ազդեցիկ և ուժի կիրառման սպառնալիքի արգելի իրավական երաշխիք, ինչը նշանակում է, որ եթէ խոսքը վերաբերում է իր ինքնորոշման համար պայքարող ազգային փոքրամասնության և «մայր» պետության միջև հակամարտությանը, տարածքային ամբողջականության սկզբունքը չի գործում:

Ակնհայտ է, որ Արցախյան հիմնահարցը ևս լիովին կարող է կարգավորվել «remedial secession»-ի սկզբունքով: Այսպէս, 1921թ. -ի հուլիսի 5-ին Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության կովկասյան բյուրոյի ոչ օրինակարգ որոշումից հետո, երբ Արցախն ինքնավարության կարգավիճակով մտավ Սովետական Ադրբեջանի կազմ, վերջինիս իշխանության մակարդակով սկսվեց արցախահայերի իրավունքների խտրական ու համակարգված ոտնահարման գործընթացը: Նախ՝ չնայած Արցախն Ադրբեջանին միացվելու ժամանակ Արցախի տարածքն ավելի ընդարձակ էր և ներառում էր մասնավորապէս Շահումյանի և Ներկայիս Բերձորի ու Զարվաճառի շրջանները, ինչպէս նաև որոշ այլ բնակավայրեր, Ադրբեջանի կողմից կատարվեցին վարչատարածքային կամայական փոփոխություններ և վերաբնակեցումներ, որոնց միջոցով փորձ էր արվում փոքրացնել հայկական տարածքային միավորի մակերեսը, կտրել Արցախի ցամաքային կապը Հայաստանի հետ՝ այն վերածելով անկլավի, ինչպէս նաև փոխել Արցախի ազգային կազմի կառուցվածքը: Արոյունքում Զարվաճառի ու Բերձորի տարածքում ստեղծվեց Զրդական գավառը («Կարմիր Զուրդիստան»)՝ Լաչին (Բերձոր) վարչական կենտրոնով: 6 տարի անց՝ 1929 թ.-ին, Զրդական գավառը լուծարվեց, իսկ այն կազմող տարածքները դարձան Ադրբեջանական ԽՍՀ առանձին վարչական միավորներ⁵²⁴: Շուրջ 70 տարվա ընթացքում Ադրբեջանի իշխանության կողմից Արցախում փակվել են բազմաթիվ հայկական եկեղեցիներ ու դպրոցներ, ազգային պատկանելության համար Արցախի հայերը ենթարկվել են հետապնդումների, սահմանափակվել է Արցախի վարչական մարմիններում ազգությամբ հայերի՝ աշխատանքի անցնելու հնարավորությունը, անդառնալի վնաս է հասցվել Արցախում գտնվող հայկական բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններին: Ընդ որում, Ադրբեջանի այդ հայատյաց քաղաքականությունը շարունակվում է մինչ օրս: Հիշենք թեկուր 2005-2006թթ.-ին Նախիջանում հայկական խաչքարերի քանդման քստմտելի դեպքը: Սրան զուգահեռ՝ Ադրբեջանի կողմից հնարավոր բոլոր միջոցներով արգելակվում էր Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումը, որի թաքնված նպատակն էր ստիպել հայերին՝ լքելու իրենց հայրենի կենսատարածքը՝ այդպիսով հայաթափելով Արցախը: Արցախահայությունը բազմիցս դիմել է Ադրբեջանի ու Խորհրդային Միության կենտրոնական իշխանությանը՝ վարվող քաղաքականությանը վերջ տալու պահանջներով, սակայն ապարդյուն: 20.02.1988թ.-ին ոգևորված գորբաչովյան բարեփոխումների քաղաքականությամբ՝ Արցախի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդները համատեղ որոշում են ընդունում դիմել Հայաստանի ու

⁵²² S t' u **Morag G.**, From Province to Protectorate to State? Speculation on the Impact of Kosovo" s Genesis upon the Doctrines of International Law". German Law Journal. 8 (2007): 1-20

⁵²³ S t' u **Advisory Opinion on the Accordance with International Law of Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo**, 141,32, (I.C.J. 2010), para. 51, 56, 80.

⁵²⁴ Տե՛ս Լեռնային Ղարաբաղ, 1921-1988թ. . , <http://www.nkr.am/hy/karabakh-in-soviet-period>

Ադրբեջանի գերագույն խորհուրդներին՝ Արցախը Հայաստանի միացնելու խնդրանքով: Ադրբեջանն արցախահայության այս քաղաքական դիրքորոշմանը պատասխանում է հայկական տարրի լայնածավալ եթնիկ զտումներով և հայերի զանգվածային արտաբուժումներով, որոնք տեղի էին ունենում ինչպես Արցախում, այնպես էլ Ադրբեջանի ամբողջ տարածքում՝ Սումգայիթում, Կիրովաբադում, Շամխորում և այլուր: Ադրբեջանական բացահայտ հայատյաց շովինիստական քաղաքականությունը գնալով ուժգնանում է՝ ի վերջո վերածվելով իր ինքնորոշման իրավունքի համար պայքարող արցախահայության դեմ պատերազմի սանձազերծման: Արդյունքում 1991 դեկտեմբերի 10-ին Արցախի ժողովուրդը հռչակում է իր անկախությունը: Անկախությանը «կողմ» է քվեարկել Արցախի բնակչության ընդհանուր թվի 82,2 տոկոսը: Ընդ որում, հանրաքվեն կազմակերպվել է ԽՍՀՄ-ի օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ օտարերկրյա դիտորդների ներկայությամբ⁵²⁵:

Ադրբեջանի կողմից արցախահայության հիմնական իրավունքների համակարգված և խտրական ոտնահարման շարունակականության մասին ցցուն կերպով խոսում է 2016թ.-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված Քառօրյա պատերազմը, որն ուղեկցվեց հակառակորդի կողմից հայ զինվորների նկատմամբ կատարված մի շարք պատերազմական հանցագործություններով:

Այսպիսով, ակնհայտ է, որ Ադրբեջանի կողմից խորհրդային Միության գոյության ընթացքում և դրանից հետո վարվել է Արցախի հայաթափման, արցախահայության հիմնարար իրավունքների ոտնահարման, անզամ ժխտման քաղաքականություն, որի նպատակն էր քաղաքականապես մեկուսացնել Արցախի հայ մեծամասնությանը՝ պայմաններ ստեղծելով հայերի զանգվածային արտագաղթի համար: Նման պայմաններում Ադրբեջանի կազմում Արցախի հետագա մնալն իրական վտանգ էր ստեղծում արցախահայության ֆիզիկական գոյության և հետագա զարգացման համար: Ուստի առկա են բոլոր իրավական նախադրյալները «անջատում որպես փոխհատուցում» հայեցակարգի հիման վրա Արցախի անկախության փաստը միջազգային հարթակներում հիմնավորելու և հարցը բանակցային օրակարգում ներառելու համար:

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի փաստարկման վերոնշյալ երկու ուղղությունները կարող են լիարժեքորեն փոխլրացնել միմյանց, և հայկական կողմերը պետք է գտնեն դրանք շաղկապելու արդյունավետ ձևերը: Օրինակ՝ միջազգային իրավունքի մի շարք մասնագետներ «անջատում որպես փոխհատուցում» ինստիտուտի կիրառման հիմք են համարում նաև տվյալ ազգային հանրույթի բնակեցրած տարածքի գրավումը, բռնակցումը կամ անիրավաչափ այլ միացումը ներկայիս «մայր» պետությանը, քանի որ այդպիսով խախտվում է այդ ազգային հանրույթի ինքնորոշման իրավունքը⁵²⁶: Սույն տրամաբանության՝ Արցախյան հիմնահարցի վրա պրոյեկտելու դեպքում կարելի է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի խախտման սկիզբ և «անջատում որպես փոխհատուցում» կոնցեպտի կիրառման հիմք համարել Բոլշևիկյան կուսակցության 1921թ.-ի հուլիսի 5-ի ապօրինի որոշումն Արցախն Ադրբեջանին միացնելու մասին: Բոլոր դեպքերում հայկական դիվանագիտությունը պետք է փորձի կիրառել համալիր մոտեցում և սինթեզել Արցախյան հակամարտության հայանպաստ լուծման համար կարևոր բոլոր կռվաններն ու հիմքերը՝ մշակելով Արցախյան հիմնահարցի բանակցություններում լայն իմաստով հայկական կողմի նոր ռազմավարությունն ու մարտավարությունը:

⁵²⁵ Տե՛ս նաև **Sargsyan R.**, Remedial Secession and Justice-Based Legitimacy: Assessing the Cases of South Sudan and Nagorno Karabakh, Central European University, 2013, p. 35, **Khalatyan A.** նշվ. աշխ., էջ 19, file:///C:/Users/Admin/Downloads/sargsyan_rima.pdf:

⁵²⁶ Տե՛ս **Norman W.** The Ethics of Secession as a Regulation of Secessionist Politics”, Oxford University Press, 1998, p. 41

Արցախյան հակամարտության կարգավորման նոր ճանապարհային քարտեզը:

Արցախյան ազատամարտից հետո անցել է արդեն շուրջ 25 տարի, սակայն հիմնախնդրի հանգուցալուծումը գնալով դառնում է ավելի մշուշոտ: Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ տարիների ընթացքում հավաքական հայկական կողմի դիրքերը, որոնք a priori պետք է լինեին ամուր՝ որպես պատերազմում առավելության հասած սուբյեկտի, գնալով թուլացել են: Սույն պարադոքսալ երևույթի առաջին բացատրությունը գտնվում է երկու՝ քաղաքական ու հոգեբանական տիրույթներում: Հայաստանի և Արցախի քաղաքական էլիտաները հետպատերազմյան բանակցություններում ի սկզբանե ընտրեցին միջազգային հանրությանը հաճոյանալու և գերտերությունների թղթե երաշխիքների դիմաց հայրենիքի համար վտանգավոր լուծումների գնալու մոտեցումը: Ընդ որում, եթե մինչև 1998թ. Լևոն Տեր - Պետրոսյանի արտաքին քաղաքական մոտեցումներում փորձ էր արվում հավասարակշռել հայկական շահերի առաջնությունը գերտերությունների հետ կոմպրոմիսի գալու անհրաժեշտության հետ, ինչի արդյունքը Արցախյան համակամարտության կարգավորման թերի ու խոցելի, սակայն հետագա զարգացումների համեմատությամբ հավասարակշռված՝ փուլային նախագիծն էր, ապա հետտերապետոլոգիայական շրջանում հայկական կողմն իր համաձայնությունը տվել է այնպիսի անընդունելի տարբերակների, ինչպիսիք են՝ Արցախի ներառումն Ադրբեջանի կազմում՝ ընդհանուր պետության կոնֆեդերատիվ ձևաչափով, Արցախի անցումը Հայաստանի կազմ՝ Մեդրիի մեծ մասի՝ Ադրբեջանի հանձնման դիմաց և, ի վերջո, Մադրիդյան սկզբունքները, որոնց մասին խոսվեց վերևում: Ավելին, 02.11.2019թ.-ին Մոսկվայում Հայաստանի ու Ադրբեջանի միջև կնքվեց հռչակագիր Արցախյան հակամարտության խաղաղ և քաղաքական կարգավորման հանձնառության վերաբերյալ, և 1994թ. -ից հետո առաջին անգամ Արցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ փաստաթուղթ ստորագրվեց հակամարտության երկու, այլ ոչ թե երեք կողմերի միջև. բացակայում էր Արցախը: Սա տարիներ շարունակ Հայաստանի կողմից վարվող ռեակցիոն և թույլ արտաքին քաղաքականության արդյունքն էր և բանակցության ձևաչափի արատավոր փոփոխության հետևանքը, երբ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա խարսխված հակամարտությունը նենգափոխվում է Հայաստանի ու Ադրբեջանի միջև տարածքային վեճի: Հայ քաղաքական վերնախավի նման վախվորած արտաքին քաղաքականությունը տարիներ շարունակ սնել է ցեղասպանությունից մազապուրծ եղած հայ ժողովրդի ազգային բարդոյթներն ու վախերն առ այն, որ հայերի գլխավոր նպատակը գոյատևումն է և ամեն գնով խաղաղության հասնելը, որ Արցախը Հայաստանի համար բեռ է և զարգացման արգելակ: Որպես վերջնահետևանք՝ մինչև Քառօրյա պատերազմը հայ հասարակությունն ընկել էր վտանգավոր թմբիրի մեջ և, թվում էր, որ իշխանության կրավորական կեցվածքը կարևորագույն ազգային հարցի վերաբերյալ ունի հասարակության հիմնական մասի լռելյայն հավանությունը կամ առնվազն դիմադրության չի հանդիպում: Միայն վերստին բռնկված պատերազմն արթնացրեց ժողովրդի գոյապահպանման բնագոյը և մղեց պաշտպանելու հայրենի եզերքը՝ գիտակցելով, որ Արցախի անկումը Հայաստանի անկման սկիզբն է: Քառօրյա պատերազմում հայ ժողովրդի պետական մտածելակերպի զարթոնքը կատալիզատորի դեր կատարեց և, ըստ ելույթի, Թավշյա հեղափոխության հարուցիչներից մեկն էր, որը եկավ քաղաքական կապիտալիզացիայի ենթարկելու ռազմի դաշտում հայ ժողովրդի սիրանքը: Ներկայում՝ հետհեղափոխական շրջանում, Հայաստանի իշխանության՝ որպես Արցախի անվտանգության երաշխավոր պետության ղեկավարության խնդիրն է վերանայել Հայաստանի նախորդ իշխանությունների սխալները նաև Արցախյան հակամարտության կարգավորման ծիրում: Պարզ է, որ նախկին բանակցային կոնցեպտները ոչ միայն չեն աշխատում, այլև օր օրի դառնում են նոր իրականությանն անհամահունչ և այդպիսով ավելի վտանգավոր: Մադրիդյան սկզբունքները ոչ թե հակամարտության պատճառը վերացնելու մասին են, այն է՝ Արցախի ինքնորոշման

իրավունքի կամ ավելին՝ այդ իրավունքի իրացման փաստի ճանաչում, ոչ թե բխում են Արցախյան առաջին պատերազմի արդյունքում ձևավորված ռազմաքաղաքական հարաբերակցությունից, այլ հակոտնյա են հակամարտության միջազգային-իրավական ու քաղաքական տրամաբանությանը և Արցախյան պատերազմի արդյունքներին, որոնք ճանաչվել են նաև միջազգային հանրության կողմից՝ ի դեմս ԵԱՀԿ-ի Բուդապեշտի գազաթափողով: Մադրիդյան սկզբունքների անհամարժեքության հիմնական պատճառներից մեկն այն է, որ դրանք, որպես բանակցային փաստաթուղթ, արտացոլում են բանակցային խեղված ձևաչափով հաստատված սուբյեկտային պատկերը՝ ի դեմս բանակցությունների, որոնք վարվում են ինքնորոշման համար պայքարող իր նախկին մարզի՝ Արցախի դեմ ագրեսիա կիրառած Ադրբեջանի ու Արցախի անվտանգության երաշխավոր Հայաստանի միջև, սակայն որոնց չի մասնակցում հակամարտության առանցքային սուբյեկտը՝ Արցախը, որի քաղաքական ու իրավական ճանակատագիրը պետք է հանգուցալուծվի այդ բանակցություններում: Հետևաբար, Արցախյան հակամարտության հաջող բանակցությունների առաջին նախապայմանը բանակցությունների՝ միջազգայնորեն ճանաչված եռակողմ ձևաչափի վերականգնումն է: Մինչ այդ, սակայն, Հայաստանն ու Արցախը կարող են գործարկել կառուցակարգեր, որոնք բանակցային եռակողմ ձևաչափի վերականգնումը կդարձնեն անայլընտրանք և կընդգծեն Արցախի միջազգային իրավական սուբյեկտությունը: Խոսքը վերաբերում է մասնավորապես Հայաստանի ու Արցախի դաշնակցության միջազգային իրավական հիմքերի ստեղծմանը: Այսօր գաղտնիք չէ, որ Հայաստանի ու Արցախի միջև հարաբերությունները կարգավորված չեն որևէ համապարփակ իրավական փաստաթղթով, ինչը դժվարացնում է նաև Հայաստանի ու Արցախի խնդիրը՝ միջազգային հանրության համար ավելի ընկալելի դառնալու և Արցախյան հարցի լուծման հայկական պահանջատիրության լեգիտիմության ամրապնդման իմաստով: Ուստի վաղուց ժամանակն է Հայաստանի ու Արցախի միջև համագործակցության, դաշնակցության կամ այլ անվանմամբ համապարփակ միջազգային պայմանագրի կնքումը, որով կսահմանվի, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Արցախի անվտանգության երաշխավորը, կուրվագծվեն նշյալ իրավական կարգավիճակում Արցախի հանդեպ Հայաստանի պարտավորությունների շրջանակները, հայկական երկու պետությունների ռազմական համագործակցության հիմնական խնդիրները, ինչպես նաև կնախատեսվեն տնտեսական, իրավական և այլ հիմնական ուղղություններով համագործակցության սկզբունքներն ու խնդիրները, փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները: Այդպիսով Արցախի ու Հայաստանի միջև հարաբերությունները ձեռք կբերեն միջազգայնորեն ընկալելի և իրավաբանորեն որոշակի բնույթ և կընդգծվի նաև Արցախի սուբյեկտությունը՝ առնվազն որպես հակամարտության կողմ, ինչը բացարձակապես հիմնագուրկ կդարձնի Ադրբեջանի այն փաստարկը, որ Արցախի խնդիրը հայ-ադրբեջանական տարածքային վեճ է, քանի որ Հայաստանի ու Արցախի միջև ռազմավարական համագործակցության նման փաստաթղթի կնքումը ցույց կտա աշխարհին, որ Հայաստանն ու Արցախը երկու առանձին, սակայն սերտորեն փոխկապակցված սուբյեկտներ են՝ փոխադարձ որոշակի իրավունքներով ու պարտավորություններով: Օրինակ՝ նման պայմանագրային բազա առկա է Ալբանիայի ու Կոսովոյի միջև, որոնք ունեն միևնույն ազգային պատկանելությունը և փոխահարաբերությունների իմաստով ունեն շատ նմանություններ Հայաստանի ու Արցախի հետ:

Հաջորդ քայլը, որ պետք է արվի եռակողմ բանակցային ձևաչափի վերականգնման ուղղությամբ՝ քաղաքականության իրականացմանը զուգահեռ, ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդների ու Ադրբեջանի հետ խորհրդակցություններ սկսելն է նոր բանակցային փաստաթղթի մշակման շուրջ, որը պետք է հիմնված լինի Արցախի անկախության ճանաչման կամ Արցախում սեղմ ժամկետներում (ոչ ուշ քան

Խաղաղության պայմանագրի կնքումից հետո մեկ տարվա ընթացքում) նոր հանրաքվե անցկացնելու անհրաժեշտության և ինքնորոշված Արցախի ու Ադրբեջանի միջև սահմանների ճշգրտման և տարածքային հարցերի լուծման գաղափարի վրա՝ պայմանով, որ Արցախի տարածքը պետք է լինի առնվազն նախկին ԼՂԻՄ-ին համապատասխան, ինչը նշանակում է նաև Ադրբեջանի կողմից օկուպացված՝ Շահումյանի շրջանի ու Մարտակերտի շրջանի մի մասի վերադարձ Արցախին: Իսկ այդքան չարչրկված տարածքային փոխզիջումների հարցը պետք է նախ՝ ածանցվի Արցախի անկախության գաղափարին և ապա՝ պետք է կարգավորվի ոչ թե Հայաստանի ու Ադրբեջանի, այլ Արցախի ու Ադրբեջանի միջև՝ հաշվի առնելով Արցախի անվտանգության ապահովման հուսալի երաշխիքների առկայության անհրաժեշտությունը: Արցախա-ադրբեջանական բանակցություններում Հայաստանը պետք է իրականացնի Արցախի անվտանգության երաշխավորի դերը՝ ուղղակիորեն չմասնակցելով դրանց, իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդները պետք է նպաստեն բանակցությունների կայացմանն ու դրանց արդյունավետ ընթացքին:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հայաստանն ու Արցախը պետք է շարունակեն ամրապնդել իրենց ռազմական ներուժը, զարգացնել իրենց տնտեսական ու ժողովրդավարական ինստիտուտները, խորացնել համագործակցությունը բոլոր ոլորտներում՝ ապահովելու համար ուժային դրական հավասարակշռությունն Ադրբեջանի հետ: Դա թույլ կտա շարունակելու հավասար դիրքերից բանակցել հակառակորդի հետ և անհրաժեշտ դիվանագիտական ու քաղաքական ջանքերի զուգակցմամբ բանակցություններում հասնելու հաջող տեղաշարժերի: Միևնույն ժամանակ արդիական ու առաջադեմ քաղաքական ու տնտեսական համակարգերով Հայաստանն ու Արցախը կունենան ավելի մեծ ներուժ դառնալու ԱՄՆ-ի և ԵՄ-ի, ինչպես նաև Վրաստանի ու Իրանի հուսալի գործընկերները տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում, ինչը համապատասխան դիվանագիտական ու լոբբիստական աշխատանքի պարագայում կարող է էապես բարելավել հայկական կողմերի դիրքերը բանակցություններում:

Բոլոր դեպքերում հարկ է գիտակցել, որ Արցախյան հիմնահարցը հայկական պետականության լինելիության և զարգացման հարցերում ունի առանցքային նշանակություն և Արցախի հայկականությունից է կախված հայկական տարրի՝ տարածաշրջանային գործոն լինելու և պետական հավակնություններ ունենալու հարցը: Ուստի Արցախյան հիմնահարցի հայանպաստ լուծման համար անհրաժեշտ է հայկական զույգ պետությունների և հայկական Սփյուռքի ջանքերի մեկտեղումը նշված քայլերի հաջող ձեռնարկման, ինչպես նաև հնարավոր պատերազմը հաղթական ավարտի հասցնելու համար:

SPROUTS OF NEW CONCEPT OF RESOLUTION OF THE ARTSAXH CONFLICT IN POSTREVOLUTIONARY ARMENIA

ARTASHES KHALATYAN

*Legal expert of the RA Chamber of Advocates,
awyer, researcher, Member of UYSSA,
Yerevan, Republic of Armenia*

The aim of this research is to investigate the Artsakh conflict negotiation process after the Velvet revolution in Armenia and to reveal the approaches of the new Government to the regulation of the problem in the light of the program speech of Prime Minister Nikol Pashinyan at the joint session of Security Councils of Armenia and Artsakh, held in March 12, 2019.

Particularly, main theses of that speech were restoration of tripartite format of negotiations and necessity to set aside Madrid principals. Afterwards the research sets the bases of new vision of the Government of Armenia, being grounded on internal and international legal documents: the RA Constitution, final document of the CSCE Budapest summit of 1994, the Bishkek protocol of 1994 etc.

In addition to the aforementioned, within the scope of Prime Minister's program speech a new version of pro-Armenian resolution of the conflict is proposed, based on historical-political and international legal arguments: illegal decision of RC(b)P Caucasus Bureau on transfer of Artsakh to Azerbaijan, legality of the process of secession of Artsakh from Azerbaijan of 1988-1991 in the context of the USSR legislation, the internationally legitimate concept of so-called "remedial secession", which may serve as a basis for substantiation of newly emerged states of their split away from the parent state etc. During elaboration of the research paper historical-legal, comparative and dialectical scientific methods have been used.

The author's main conclusions are: validity of formation of the new concept of regulation of the Artsakh conflict, voidness of the concept "territories in exchange to peace or interim status of Artsakh", possibility of mutual cessions only in case of recognition of independence of Artsakh by Azerbaijan and conducting negotiations over mutual cessions between Azerbaijan and Artsakh in the form of delimitation and demarcation of boundaries of each other and necessity of further political and economical development of Armenia and Artsakh for the sake of maintenance of irreversibility of peaceful negotiation process.

Keywords: *Artsakh conflict, Madrid principles, principle of remedial secession, self-determination of peoples, tripartite negotiation format, Velvet revolution, OSCE Minsk group, referendum.*

ЗАЧАТКИ НОВОЙ КОНЦЕПЦИИ УРЕГУЛИРОВАНИЯ АРЦАХСКОГО КОНФЛИКТА В ПОСТРЕВОЛЮЦИОННОЙ АРМЕНИИ

АРТАШЕС ХАЛАТЯН

*Эксперт по правовым вопросам Палаты адвокатов РА,
адвокат, исследователь, член ОМУСА,
г. Ереван, Республика Армения*

Цель данной научной работы – исследование переговорного процесса по Арцахскому конфликту после Бархатной революции в Армении и выявление подходов нового правительства к урегулированию конфликта на основе программной речи премьер-министра Армении Никола Пашиняна на совместном заседании советов безопасности Армении и Арцаха 12 марта 2019-го года. В частности, основными тезисами речи являлись необходимость восстановления трехстороннего переговорного формата и отказа от Мадридских принципов.

В данном исследовании обосновывается новое видение правительством Армении процесса урегулирования Арцахского конфликта, ставя акцент на внутригосударственные и международные правовые документы, такие как Конституция РА, заключительный документ Будапештского саммита СБСЕ 1994-го года, Бишкекский протокол 1994-го года и т.д. В качестве дополнения к вышеуказанному в данной научной работе представлен вариант отвечающего интересам армян решения Арцахского конфликта, основываясь на следующих историко-политических и международно-правовых аргументах: неправомерное

решение Кавказского бюро РКП(б) 5 июля 1921-го года о передаче Арцаха Азербайджану; правомерность процесса отделения Арцаха от Азербайджана в 1988-1991гг. в контексте законодательства СССР; легитимная на международном уровне т.н. концепция «отделения в качестве компенсации», которая может послужить основой для обоснования национальными меньшинствами, подвергающимся насильственным гонениям, своего отделения от метрополии и т.д.

В процессе данного исследования автором были использованы историко-правовой, сравнительный и диалектический научные методы.

Автором были сделаны следующие основные заключения: формирование новой концепции урегулирования Арцахского конфликта закономерно; формула «территории в обмен на мир или промежуточный статус Арцаха» неприемлема; взаимные уступки возможны только в случае признания Азербайджаном независимости Арцаха и ведения переговоров между Азербайджаном и Арцахом в форме взаимной делимитации и демаркации границ, дальнейшего политического и экономического взаимодействия Армении и Арцаха с целью обеспечения бесповоротности мирного переговорного процесса.

Ключевые слова: *Арцахский конфликт, Мадридские принципы, концепция «отделения в качестве компенсации», право наций на самоопределение, трехсторонний формат переговоров, Бархатная революция, Минская группа ОБСЕ, референдум.*

Աննա Փախլյան, Անուշ Անանյան. Տնտեսական զարգացման մարտահրավերները համաշխարհային հանրության կողմից չճանաչված երկրներում. պատմատնտեսագիտական զուգորդումներ.....285
Anna Pakhlyan, Anush Ananyan. Economic Development Challenges in the Countries Unrecognized by the World Community: Historical-Economic Comparisons
Анна Пахляян, Ануш Ананян. Вызовы экономического развития в странах, не признанных мировым сообществом: историко-экономические ассоциации

***ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE,
 ЮРИСПРУДЕНЦИЯ***

Լուսինե Բարխուդարյան. Իրավական ակտիվությունն ու նրա դերակատարությունն Արցախի Հանրապետության՝ որպես իրավական պետության կայացման գործում.....294

Lusine Barkhudaryan. Legal Activity and its Role in the Formation of the Republic of Artsakh as a Legal State

Лусине Бархударян. Правовая активность и ее роль в становлении республики арцах как правового государства

Մարիամ Գրիգորյան. Միջազգային հանրային իրավունքը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ազգային-ազատագրական պայքարի իրավաչափության հարցը.....306

Mariam Grigoryan. International Public Law and Question of Legitimacy of the National-Liberation Struggle of the People of Nagorno-Karabakh Republic

Мариам Григорян. Международное публичное право и вопрос правомерности национально-освободительной борьбы населения Нагорного- Карабахской Республики

Արտաշես Խալաթյան. Արցախյան հակամարտության կարգավորման նոր հայեցակարգի սաղմերը հետհեղափոխական Հայաստանում.....316

Artashes Khalatyan. Sprouts of New Concept of Resolution of the Artsakh Conflict in Postrevolutionary Armenia

Арташес Халатян. Зачатки новой концепции урегулирования арцахского конфликта в постреволюционной Армении

Աղվան Հովսեփյան. Հայրենասիրությունը և հայոց պետականությունը հայ իրավունքի նորմերում.....333

Агван Овсепян. Патриотизм и армянская государственность в нормах армянского права
Aghvan Hovsepyan. Patriotism and Armenian Statehood in the Norms of Armenian Law

ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

Աննա Պետրոսյան. Տնային աշխատանքը որպես կրտսեր դպրոցականի ինքնուրույն ուսումնական գործունեության արդյունավետ հնար.....345

Anna Petrosyan. Homework as a Method for Developing Learners' Activities

Анна Петросян. Развитие собственной активности учащихся во время выполнения домашних заданий